



ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

III.—Խաչին ճամփան

Եղբենավին մեջ ենք արդեն:

«Ես քանի մը ընկերներու հետ, կպատմե Անտոնյան, հաջողեցա սպրդիլ մինչև առաջին կարգի ճամփորդներու հատուկ սալոնը: Ուրիշները մեզմե առաջ կրցեր էին նույնը ընել, և երբ սալոն մտանք, անկյուն մը տեսանք մեղ նման հետիոտն եկողներեն Տիրան Քելեկյանը, դոկտ. Թորգոմյանը, Հայկ Խոճասյանը ու Կոմիտաս վարդապետը, որոնք նստելու տեղ գտեր էին»:

Բոլորը մտահոգ էին թե ո՞ւ կտարվին այսպես: Ամեն մեկը ենթադրություն մը կը ներ: Մյուս կողմե ոստիկանները սկսած էին հետպհանեա ավելի դաժան դառնալ:

«...Մենք դուրս ելանք միջոց մը, տեսնելու համար թե ինչու չեն դադրած ոստիկաններու պողոտուքները, որոնց արձագանքները մինչև սալոն կհասնեին: ...Ոստիկանները կշանային պատիկ խումբերու վերածել անցքերու մեջ խոնվածները և զանազան խուցերու և սրաներու մեջ տեղավորել զանոնք, և եթե այս գործը կդժվարանար, պատճառը իրենց կողմե կիրարկված բրտությունն էր: Ամենեն կոպիտները զաղանի ոստիկաններն էին, որոնք շենք շնորհի կհայշոյեին աշ ու ձախ: Մեզի շատ բնական թվեցավ հայ լրոտեսներու ներկայությունը անոնց հետ: Այն մթնոլորտին մեջ ուր կզտնվենք, ասիկա պլի զարմանալի չեր: Ոչ իսկ զգուշություն կը-

նեին իրենց մեր մեջ ներկայությունը ծածկելու համար: Օրը իրենցն էր ապահովաբար:

...Երբ կրկին մտանք սալոնը, Կոմիտաս իր անկյուննեն ելեր և հայտնի չէ թե ինչպես տեղավորվեր էր դոկտ. Տաղավարյանի և դոկտ. Թորգոմյանի միջև: Երկու թժիշկներն ալ կու լային, և Կոմիտաս մեյ մը մեկուն, մեյ մը մյուսին կուղղեր շատ անհանգիստ արտահայտությամբ մը վառված աշքերը՝ Երեմեն կամ Տաղավարյանի և կամ Թորգոմյանի կողմը հակելով, բաներ մը կմրմնչեր, թերևս միխթարության կամ քաջալերության խոսքեր, զորս չենք իմանար»:

Եվ ահա շոգենավին շլակը: «Շուտով զգացինք անիվներուն դառնալը և անոնց հարուցած ճողփյունը: Հայտնի էր որ ճամփա պիտի ելլեինք: ...Դոկտ. Թորգոմյան հանկարծ ոտքի ելավ և մինչև սալոնին դուռը հառաջանալով, աշքերը ուղղեց լուսնին: Երկար պահ մը զայն զիտելե ու այտերն ի վար իշնող և մորուքին երկայնքը մարգրտացող արցունքները սրբելե վերջ, գեմքը ուղղեց թերացի սիլուետին, լաւագին ձայնով մը մրմնչելով.

«— Մնաս բարո՞վ... ա՞լ քեզ տեսնելիք չունիմ...»

«Զինքը առին տարին ու նստեցուցին Կոմիտասին քով: Այս վերջինը այլևս շուրջիններով չէր զեաղեր կարծես: Իր աշքերը, որոնց մեջ նայվածքը բոլորովին անհանգիստ ու անհանգարտ արտահայտություն մը ստացած էր, հառած էր զիտինը, որոշ կետի մը»:

Արամ Անտոնյան կպատմե թե ապրիլ 13/26-ի իրիկունը հայ աբորականներու կարավանը պիտի հասներ վերջապես իր առաջին հանդրվանը, Բավլիի խանը, ուր և պիտի սկսեր Կոմիտաս վարդապետի տուամբը»:

* Երարտնակպած «Երմիածին» ամսագրի 1965 թվականի Ա.թից, 6—Ժ.թից, 1966 թվականի Ա.թ. Ա.թ. թից, Ը.թ. թից, 1967 թվականի Ա.թ. Գ.թ. և 1968 թվականի Ա.թ. Ա.թ. թից:

«Բառը, կգրե, հաճախ գործածված ու գործածվելու վրա, ճիշտ չէ, և լուղոր շափազանցություն մըն է, երբ կակնարկե ախորի ընթացքին իր մոտ հայտնված տափապին: Ու որքան ալ թուլթակներու բազմություն մը անընդհատ կրկնին թե Կոմիտաս խներեցավ տարագրության ճակտին վրա, իրականությունը սա է որ Կոմիտաս շխներեցավ ախսրի ընթացքին: Իր մտքին վկուվամն բուն տռամը, որ հետագային Պոլսու մեջ կերպարանք առավ, մանվածապատ կնճիռ մըն է, որուն թափանցելու համար պետք է կանգ առնել բազմազան պատճառներու վրա: Շատշատ այդ տռամին պատճառներեն մեկը, և ո՞չ թե պատճառը կրնանք նկատել նաև աքսորը: Թայց ասիկա չի նշանակեր որ եթե աքսորը ըըլլար, տռամը չպիտի հայտնվեր: Առիթ պիտի ունենամ այս կետին անդրադառնալու: Սա միայն ըսեմ այստեղ որ Կոմիտասի և ուրիշ յոթ բախտակիցներու համար, աքսորը շատ կարճատե եղավ, այսինքն լոկ 15 օր,—բանտարկության և ճամփորդության օրերն ալ միասին հաշվելով: Մեզի հետ ձերբակալված էր ապրիլ 11-ի (Հ. Տ.) շաբաթ օրվան գիշերը, Պոլսեն ելանք հաջորդ կիրակի գիշերը, միասին Զանդըրը ժամանեցինք ապրիլ 15-ի շորեգարթի իրիկունը, իր վերադարձի հրամանը հասավ 11 օր վերջ, ապրիլ 26-ի կիրակի առառն, օր մըն ալ ազատ շրջեցավ Զանդըրը մեջ, բոլորովին զերծ ամեն հարկադրութենե, և ապրիլ 28-ի երեքարթի օրը, ինք և իր յոթ բախտակիցները մեկնեցան Պոլիս, որ պիտի մտնեին մայիս 2-ի շաբաթ իրիկունը:

Կոմիտասի ամբողջ տռամը աքսորի մեջ, զղագրության, ըսենք քիչ մը բռուն զղագրության պահ մը եղավ, որ երեկ վրկովիշ համեմատության մը չհասավ և երկար ալ շքաշեց: Իր տափալը, ենթադրելով որ չէր սկսած արդեն, առաջին անգամ հայտվեցավ ապրիլ 14-ի իրիկունը, Բավկի ժամանելս քիչ ետքը, հասարակ ժանաբարմայի մը կողմէ գործված աննշան բրտության մը վրա, և տևեց մինչև ապրիլ 16-ի իրիկունը, երբ արդեն Զանդըրի գորանոցն էինք, այսինքն ընդունածնեն երկու գիշեր և երկու օր, այն ալ ոչ մշտատե կերպով, այլ ավելի կամ նվազ երկար ընդհատումներով, որոնց ընթացքին թիւ անգամ բար մը եղավ բերնենք:

«Բավկի հանգրվանը հասեր էինք իշնելով քարուտ ու գրեթե ցից բարձունք մը, որմն վար մեր կառքերուն: գահավիժումը, բարերախտաբար կարճատե, ճամփուն ամենեն ծանր տաժանքը պատճառած էր մեզի: Զարմանալի չէր որ մեր կայք ժամանումը փախուստ մը եղավ կառքերն, որոնցմե ամեն մարդ վար նետվիլ կուվեր վայրկյան մը առաջ: ...իշնողները առհասարակ կուղղվեին

դպի խանը, ընդարձակ երկհարկանի քառակուսի շենք մը» որ «ավելի ամրոցի կնմաներ քան բնակության սահմանված ուեւ շենքի: ...Պարզ էր որ ցուրտ գիշեր մը պիտի ունենայինք: Ոմանք իրենց մարմնին ամենեն խոշտանգված մասերը կմարձեին, փոխնիփոփի ցավի կամ գոհունակության կանչերով, երբեմն նաև հիշոցներով, որոնց ստվար ու արդար բաժինը օրվան պետական մարդոց կուղղվեին»:

Մարավը կշարարեց բոլորը: Ամեն որ գեպի հրապարակ կփութար ուր ջրհան մը նրշմարեր էին: Առաջին գացողները ետ դարձան հուսահատ, որովհետեւ կառապաններն ու ժանտարմանները արդեն ջրհանին մոտ տեղավորվեր էին իրենց անասունները ջրելու, իսկ վեց դույլեր կային ջրհանին առջև, 42 կառքերուն 84 ձիերուն համար, ու վեճը ծագեր էր արդեն կառապաններուն և ժանտարմաններու միջև և հետզհետեւ կսաստկանար: Ու ահա կարավանին ամենեն երիտասարդներն երկուքը, Արմեն Տորյան (Հրաչյա Սուրենյան) և Փաստրմաճյան, ջրհանին շուրջ տիրող խառնակութենեն օգտվելով, հաջողներ էին լեցուն դույլերն մեկը փախցնել, կառքերու պատվարը անցեր էին, և դեպի իրենց ընկերները կու գային, որոնք խելահեղ կրսպասեին զորի քանի մը կաթիի:

«Երենցմե ամենեն անհամբերը Կոմիտասին էր: Հազիվ մեզի մոտեցած, Փաստրմաճյանի և Տորյանի բերած դույլը և անոր մեջ ծփացող վճիտ շուրը տեսնելով, պոռաց ուրախութենեն, գլուխ առաջ, գեպի դույլը ցցեց և սկսակ թրուալ, ձեռքերը արագորն իրարուշիւլով, ինչպես հաճախ կըներ հրճառիթ պահներու մեջ: Աշվըներուն հրավան նայվածքը պարզապես գամված կմնան դույլին մեջ հանգած աղամանդպավառ ջուրին, իբրև թե անկ դուրս աշխարհ գոյություն շունենար իրեն շաբաթ:

Սակայն այդ դույլին խմելը խնդիր մըն էր: Գավաթի կամ ուեւ աման շոմեինք, և չէնք ալ կրնար մեր ափերեն օգտվիլ, որովհետեւ ամենուա ալ ձեռքերը երկար ատենե ի վեր չէին լվացված, և ճամփուն ընթացքին ամեն բանի քսվելով-քսվելով այնքան աղտոտած ու սեցած էին որ շատեր պատրանքը կունենային թե ձեռնոց կկրեն: Պետք եղավ որ դույլը բերող երկու շուտիկները վերցնեն զայն մինչև վարդապետին բերանը որպեսզի խմելու ձև մը գտնեն:

Թայց ճիշտ այն պահուն ուր Կոմիտաս շրթոնքը ցցած, ձեռքերը դույլին կերկնցներ իրը հենակ, որպեսզի կարենա հանգիստ խմել, ձիավոր ժարտարմաններն մեկը, որոն մեզի մերձենալը չէնք նշմարած, բիրտ հարվածով մը դույլը թացուց Փաստրմաճյանի ու Տորյանի ձեռքերն առաջարած բարերախտություն մըն էր

որ երկաթի լայն շրջանակներով ծանր շրամանը Կոմիտասի կամ ուրիշի մը զիսուն շրբախեցավ. Հետևանքը կրնար շատ ծանր ըլլալի Բայց Կոմիտաս այդ ընդհարման վախը կրեց, և երկու քայլ ետ նետվեցավ, աշ բաղովը բռոլորելով զիսուն շուրջ, իբր թե զայն պաշտպանել ուզեր գալիք վտանգի մը գեմ: Միայն մաս մը չուր ժայթքած էր դեմքին վրա, և սկսակ կաթիթիլ մորուքն ի վար: Թրջեցավ մանավանդ Երվանդ Չափուշյան, որ անոր ճիշտ մոտը կանգնած էր:

Այսքան արագությամբ տեղի ունեցավ այս անցըը որ մեզմեն շատեր չէին հասկցած թե ի՞նչ պատահեցավ իրոք: Դույլը գետինն էր, ամբողջովին պարպված, և ուրիշ բանի չէինք նայեր:

Կոմիտաս պարզապես շշմած էր, բոլորովին անշարժ կմնար, իբր թե քարացած ըլլար, և կարծես չէր նշանակները այն թաշկինակները զոր մեր ընկերներն ումանք իրեն կերկարեին որպեսզի շորցն զեմքը Աշվըները, որոնց մեջ եթե ոչ սարսափի, գոնե արտակարգ զարմացման արտահայտություն մը պաղած կմնար, չէր բաժներ ժանտարմային: Այս վերջինը, անհասկանալի մոլուցք մը բերնին, ծոնեցավ վերցուց դույլը ու հեռանաւու վրա էր, երբ իպրահիմ էֆենտի, — կարավանին վարիլ, — որուն ամենատես աշքերն չէր խոսափած այս միջադեպը, մեր կողմը շտապեց և կեցուց զայն:

— Ո՞ւր կտանիս այդ դույլը, հարցուց:

— Մեր հայլանեներ (անասունները) պիտի չըրեմ:

— Էվլիլա պո' հայլանլարը (էն առաջ այս անասունները), պոռաց իպրահիմ էֆենտի, դույլը վար զնել տալով:

Ասիկա ըսակ շատ բնական եղանակով մը, թերևս առանց մտքեն անցնելու թե կրնայինք անկե վիրավորվիլ: Անշուշտ ավելի վայելու կերպով մը կրնար ըսել էվլիլա պունլարը (էն առաջ ասունք), բայց չեմ կարծեր որ հայլան բառը մեղ նախատելու մաքով գործածեց: Թուրք պաշտոնատարները հաճախ կը կերպարեին զայն, — պարզ կրթության պակասի, անփափկավարության և կամ վարժության բերմամբ: Եվ մեր հայ աղաներն ալ այդ բառով դժգոհություն կարտահայտեին, երբ թերություն մը տեսնեին իրենց ստորադասներուն կամ պաշտոնյաներուն մոտ:

Ժանտարման, միշտ նույն անըմբոնելի մտմտուքը բերնին, թերևս ակուներուն մեջն հայլությունը, հեռացավ զնաց: Կոմիտասի աշքերը միշտ անբաժան մնացին անկե, մինչեվ որ անհետացավ:

Իսկ իպրահիմ էֆենտի, պարապ դույլ ձեռքը գեպի հրապարակը ուղղվելով, վերջ տվակ ժանտարմաներու և կառապաններու

միջև ծագած վեճին, և անշուշտ իր հրամանին վրա էր որ կառապաններ տրամադրելի վեց դույլերն չորսը լեցնելով մեզի բերին, խընդրելով միայն որ շուտ հագեցնենք մեր ծարավը:

Բնական է շտապեցինք, մանավանդ որ այդ դույլերն չուր խմել այլիս որևէ դժվարություն չէր ներկայացներ, շնորհիկ նախախամական շերեփի մը զոր ումանք խանին նպարավաճառին մոտ գտեր էին, և զոր մաքրեցին ոչ թե օճառով որ երազ մըն էր Ռավդի այդ կայքին մեջ, այլ գետնի հողով:

Կոմիտաս, որ պահ մը առաջ ամեննեն ծարավին էր մեր մեջ և ամեննեն անհամբերը, և որուն մատուցին շերեփով առնված ջուրի անդրանիկ բաժինը, շխմեց և լոիկ խան մտավ:

«Ծուտով մոոցանք ժանտարմային հարուցած միշադեպը, Կոմիտասն ալ անոր հետ Զեմ կարծեր որ իրեն մատուցված ջուրին մերժումը, հետո իր լոիկ նահանջը դեպի խանը, մտահոգության և կամ մասնավոր ուշադրության առարկա դարձան ականատեսներուն կողմեն: Եղածը ինքնին մեծ բան չէր: Աքսորի ճամփու մը վրա, ժանտարմայի մը բրտությունը անշուշտ անակնկալի մը բնույթը չի ստանար աքսորականներու աշքին, թողումք թուրքին, նույնիսկ բոլորովին քաղաքակիրթ երկիրներու մեջ: Ժանտարման ամեն տեղ և ամեն ժողովուրդի մեջ, անողորմէ է, — ըսելու համար ուրիշ բան:

Արդեն ուրիշ զբաղում ունեինք: Թուրք գեղջուկներ հայտնվեր էին մեր շուրջը, իրենց հետ բերելով ինամով կապված հարդի շոր խորհեն: Կարելի էր անոնցմեն մեկ քանի հատ միացնելով բազմոցի պես բան մը հարդարել կառքերուն հատուկը:

...Մկրտիչ (Պասմաճյան) արդեն հեռացեր էր գեպի գեղջուկները, Խոճասարյան ու ես ալ անոր հետեւելու վրա էինք, երբ Քելեկյան որ խանին զուրս եկեր էր, ձայն տվակ մեզի, ու մեր մոտ գալուն հարցուց թե ի՞նչ պատահած էր Կոմիտասի: Իրմե իմացանք որ վարդապետը «անսովոր երկությունը մը ունի», չի խոսիր ու կասկածու նայլածք մը կծփ իր շուրջը շարժուկող, մասնավորաբար խան մտնող ամեն մարդու վրա:

Փանի մը բառով պատմեցինք եղածը, առանց ծածկելու թե միշադեպին բռն պատճառը Տորյանն ու Փաստրմաճյանը եղած էին: Պատմեցինք նաև իպրահիմ էֆենտիին միջամտության պարագան, հայտնելով որ պարզապես կշտամբած էր ժանտարման, մեզ ալ այդ առթիվ անհաճո բառով մը պատվելով:

Քելեկյան լայն շունչ մը առաջ: Ինք ալ, ինչպես ներսը գտնվողներեն ոմանք, այնպես

կարծեր էին թե հատկապես Կոմիտասի գեմքան մը տեղի ունեցած է դուրսը, մինչդեռ ժամանակաման ո՛չ Կոմիտասի, ո՛չ ալ մեզմե մեկուն կամ մյուսին ունէ խոսք չէր ուղղած: Դույլին փախցվիլը տեսած միջոցին անշուշտ իր աշքեն չէին վրիպած նաև զայն փախցնողները, Տորյանն ու Փաստրմաճյանը, որոնք Կոմիտասի մոտն էին, և որոնց նույնպես բան մը չէր ըստ, այլ լոկ դույլը առնել տանիլ ուղած էր:

— Փախցանք որ պարագան ավելի ծանր բան մըն է, ըստ Քելեկյան:

Հայոտապես ապահովված էր և գոհ կերեւարու:

«Երբ խան մտանք, Կոմիտասը տեսանք նստած թրքական սրարաններու հատուկ ցած ու առանց հենարանի աթոռակի մը վրա, բակին ձախ կողմի խոցերեն մեկուն մոտ, հայտնապես անհանգիստ դրության մը մեջ: Իր շուրջը, նույնպես աթոռակներու վրա նըստած էին դոկտ. Թորգոմյան, գոկտ. Ծեվահիրճյան, վերապ. Քերոբյան, Պալաքյան վարդապետ և ուրիշներ: Ոչ որ կխոսեր: Կոմիտաս հազիվ թե անտարբեր ակնարկ մը նետեց մեր վրա, երբ իր առջևնեն անցանք: Քելեկյան մնաց այնտեղ, ես հեռացա հոճասարյանի հետ և միացանք ծանոթներու խոմբի մը:»

Այդ միջոցին մեր ստվար մեծամասնությունը խանն էր արդեն: Դուրսը մնացողներն ալ, ցուրտեն խթանված, հետպհետ ներս կը-մտնեին: Ոմանք կրցեր էին աթոռակի մը գրանել ու նստիլ: Ուրիշները երկնցած էին ստորնահարկի խցիկներուն առջև փոված փսխաթներու վրա, խումբ-խումբ կխոսեին: Կոմիտասի «անսովոր» երկութը շատ աշքի չէր զարկած, և դուրսը պատահած միջադեպը առհասարակ անծանոթ մնացած էր:

Խանին նպարավաճառը մոտակա Տյուման-սըր գյուղը դրկեր էր մեկը, ուտելիք գտնելու համար: Անոր ընկերացեր էր գասթեմունիցի թուրք երիտասարդ մը, որ թուրք կիներու կողմէ հարձակում կրեր էր Տյումանլը անուն գյուղի մը մեջ, գյուղ ուր կիներ միայն կը-բնակեին և ուր մտնելու անխոհեմությունը գործեր էր: Մարդուն գուշը դեռ կիսուին կորսված կմնար վիրակապերու տակ:

«Ճիշտ այդ միջոցին Կոմիտասի ձայնը առինք, և իր կողմը դարձանք:

— Ժանտարման է արել, կհարցներ շուրջիներուն, աշ ցուցամատը ցցած դեպի երիտասարդը:

Մեկ երկու հեղ կրկնեց այս հարցումը:

Չեմ գիտեր ի՞նչ պատասխան տվին իրեն: Անշուշտ միշտ վրդովիլ երկութը մը ուներ, և աշքերուն մեջ վառող նայվածքը պարզապես անհանգտություն կպատճառեր դիտողին, բայց իր խոսիլը բարենշան բան մը նկատ-

վեցավ անոնց կողմէ որոնք տեղյակ էին թիւան դառնալեն ի վեր բառ մը չէր արտասանած:

Ժանտարմայի այդ մտավախությունը, առաջին հայտարար երկութը իր զղագրգության տագնապին, որ նույն գիշերն ու հաջորդ օրը բոլորովին սուր կերպարանք մը պիտի ստանար, իր մեջ բույն դրեր էր արդեն:

Շուտով սակայն դադրեցանք իրմով հետաքրքրվելե, և մեր ուշագրությունը կերպունացավ գովասեն եկողներու վրա. որոնք կը-ծանուցանեին թե կառքերը լծվելու և շարվելու վրա են»:

«Երիկոնը ուշ ատեն բաժնվեցանք Բալվիեն, երբ գեռ լույս էր: Բոլորս ալ դժուն էինք անոր համար որ կնախընտրեինք գիշերը խանը անցնել: Էնկյուրի-Բավլի ճամփան կես մը խորտակած էր մեղ, և գիշերվան մը հանգիստը, հոգ չէ թե խանին աղոտա փսխաթներուն վրա, նույնիսկ առանց բարձի ու ծածկոցի, ճշմարիտ կազդույր մը կրնար դառնալ:

Հետո տարեց մարդիկ կային մեր մեջ, ու նաև հիվանդներ: ...Մտահոգության պարագա մըն էր նաև Կոմիտաս վարդապետի ջղագրությունը:

...Կառքերը, ինչպես կնախատեսեինք ու կվախնայինք, շուտով սկսան իրենց դժոխային պարը խճուղիին վրա, եվ ալ չեմ ակնարկեր մեր խեղճ ուկորներուն տաժանքին, մանավանդ երբ մութը իշավ ու կարավանին ընթացքը կատարյալ արշավի մը վերածվեցավ:

...Այս գիշերային արշավանքը գեպի Գալենիքը, ավելի տաժանելի բան մը զարձակ բան մեր ուղեգնացությունը էնկյուրիին Բալվի:

...Շուտով սարսափին ալ պիտի ավելնար ցորդին տաժանքին»:

Դժնակ եղած է Բալվիին Գալենիք տանող ճամփան:

«Ճամփա չէր, կպատմե Արամ Անտոնյան, այլ գետնուղի մը, ուր խավարը կտիրապետեր կուպրի թանձրությամբ, և որուն մեջ ամեն բան, մեր գլխուն վրա ցցված ժայուրը, անոնց ծերպերուն մեջ զանգրացած վայրի բույսերու խորձերը, հողի ցցունքներ, և ասդին-անդին ըստ բախտի հասակ նետած մենավոր ծառերու գագաթնել-ը, ուրուային ձեվեր կառնեին, զորս մեր երկակայությունը իսկույն կփոխակերպեր առասպելական հըսկաներու կամ հեքիաթունակ հրեշներու:

Գղարձացանք երբ վերջեն Պալաքյան վարդապետ պատմեց թե Կոմիտաս, որ իրենց կառքին մեջ կպանվեր, այդ մթին անցքին ամբողջ երկարության վրա տեսած ժայուի ցըցունքներն ու ծառերը կշփոթեր դարանակալ ժանտարմաներու հետ, և կատարյալ սարսափի մը մատնված, իր գեմքը կծածկեր եր-

կու ափերով, կամ գլուխը ուղեկցին վերաբ-
կուին ծալքերուն տակ կմիտրձեր, պաղատե-
լով որ «Պահպանիչ» կարդա իր վրա: Պալաք-
յան կավելցներ թե ինքն ալ անձնապես այն
տպավորության տակ մնաց թե յուրաքանչ-
յուր ծառի կամ ապառաժի ետին ավազակ
մը կծկուած է, հրացանը ձեռքը, պատրաստ
կրակելու:

Ուրիշներ ավելի եղերական մտավախու-
թյուններ ունեցեր էին, ինչպես վերջեն
պատմեցին: Եվ ասիկա ալ զարմանալի չեր,
որովհետև այդ սոսկալի արահետը, որուն
մեջ միրճձեր էինք, իրոք հարմարագույն
սպանդի վայրերն մեկը կրնար դառնալ, եթե
այդ եղած ըլլար մեզ առաջնորդողներուն
նպատակը:

Բարերախտարար երկար շտենց: Շուտով
մեր ետին թողոցինք զայն ու վերստին մր-
տանք դաշտային տարածություն մը, որուն
վրա խճուղին բաղդատարար լավ վիճակի
մեջ կմնար»:

Արամ Անտոնյան նկարագրելով արսորա-
կաններու կարավանին ժամանումը Գալի-
ձիք, կպատմէ թե անոնք ինչպես զետեղվե-
ցան իանի մը մեջ, որ երկնարկանի տպեկ
շենք մըն էր, լիրի բարձուղիք մը վրա:

«Վերջին անցքը որ կհիշեմ,—կդրի,—Կո-
միտասի մուտքը էր. Պայաբյանի հետ կողք-
կողքի մտան ներս, և Կոմիտաս պարզապես
ոռնաց, տեսնելով գետնահարկին մեջ ծա-
վալած ծուփը որ բոլորդին թանձրացեր էր
ատենի մը ի վեր, որովհետև մեզմն շատեր
շարունակարար ծիւելու վրա էին: Գիտեինք
որ նույնիսկ սովորական կյանքի մեջ, թո-
ղունք վառվածք, չվառած սիկարեթի մը
տեսքն իսկ չղայնություն կպատճառեր իրեն: Զինքն
ալ վերնահարկը հանեցին շուռառվ,
կենթագրեմ կես մը բոնի, որովհետև բանի
կրարձրանար, ծուփը այնքան զգալի լրվար,
ու կդժկամակը ելլելուա:

Առոտուն, աքսորականները մոտակա հրա-
պարակը հանվին որպեսզի գնումներ ընեն
ժանառմաններու հակողության տակ:

«Այդ միջոցին մեր մոտ տեսանք Կոմիտա-
սը, միայնակ, ինչ որ շատ լավ տպավորու-
թյուն ըրավ ամենուս ալ վրա: Քանի որ հե-
տեղորդ շուներ, ուկեմն հանդարտած պետք
է ըլլար: ...Մեր շուրջն էին ժանտարմաններն
մեկ քանին որոնք նույնպես գնումներ կրնե-
ին: Կոմիտաս՝ միշտ նույն ակնածությամբ
կրարձեր բոլորն ալ, այնքան խոնարհու-
թյամբ որ մեզմն ոմանք, մանավանդ անոնք
որ տեղյակ չէին իր չղագրգոռության պարա-
գաններուն, սկսան կասկածիլ թե ժանտարմա-
նները կհեղնե:

Եվ սակայն լուրջ էր, եթե կարելի էր ըր-
ջություն անունը տալ այն հոգեկան դրության
որուն մեջ կտվայտեր: Մեզ ալ կորդորեր

նույնը ընել, և կարծես կղարմանար որ ժան-
տարմանները ունէ մտահոգության առարկա
շեն մեր մոտ:

Հայտնի էր թե ժանտարմայի մտավախու-
թյունը միշտ վառ կմնար իր մեջ, հակառակ
անոր որ այլպես հանդարտ կթվեր: Պահ մը
վերջ, երբ այլևս ժանտարմա շմանց մեր
շուրջը, սկսավ նույն հարգավիր ողջուններուն
առարկա դարձնել բոլորովին անծանոթ մար-
դիկ, որոնք ապշությամբ կդիտեին իր ընթաց-
քը, և գուփինին թոթվելով իրենց ձամփան
կշարունակեին, առանց բան մը հասկցած
ըլլալու այդ անակնակալ հարգանքի արտա-
հայտություններն: Տարակույս շկար որ Կո-
միտաս զանոնք կշփոթեր ժանտարմաններու
հետ, ինչպես գիշեր նույն շփոթության ա-
ռակա գարձուցեր էր ձամփուն վրա զանովող
ծառերը, երբ սրարշալ կանցնեինք անոնց
առջևնեն»:

«...Գալեձիք 200 տուն հայություն ուներ,
և ասոնք ունէ մտավախություններ վերծ էին այդ
օրերուն: Շուտով արհավիրքը պիտի հնձեր
բոլոր այրերը, կիներն ալ թուրքերու ցանկու-
թյան առարկա դարձնելով: ...Գիշերը իմա-
նալով որ բազմաթիվ հայեր բերված են և թե
կրոնավորներ ալ կային անոնց մեջ, այդ աղ-
նիվ մարդիկը անկողիններ ու վերմակներ
բերեր էին վերջիններուն համար: ...Այնպես
որ բավական հանգիստ գիշեր մը անցուցեր
էին եկեղեցականներն ու հիվանդները, ան-
շուշտ նաև ուրիշներ:

...Կոմիտաս ալ շուտով հանդարտեր էր,
քոնեն ընկճվելով, և կրցեր էր բնանալ»:

Առավոտուն, շատեր փութացեր էին Գալե-
ձիքի վաճառատեղին՝ զնումի: «Գալեձիքին
խումբ մը հայեր եկեր էին մինչև վաճառա-
տեղին, և ապահովաբար կուկեին մեզի հետ
հարաբերության մեջ մտնել: Բայց կզգուշա-
նալին, թերեւս ո՞չ այնքան իրենց, որքան մեր
վիճակը դժվարացնելու մտավախությամբ:
...Բայց ատեն չունեցանք մերձենալու այդ
հայերուն, որովհետև հանկարծ իմացանք թե
էնկուորիին ծիավոր ժանտարմա մը հասած
և համան մը բերած է մեր մասին: ...Բնա-
կան է այլևս հանդեցանք վաճառատեղին: Ո-
մանք զանազան ենթագրությանց մղվի
սկսան: Լավատեսները կխորհեին թե ժան-
տարման կրնա մեր Պոլիս վերադարձին հրա-
մանը բերած ըլլալ:

Երբ խանին առջև հասանք, մեզմն քանի
մը փոքր խումբեր միայն կդանվեին այնտեղ:
Վաճառատեղին դարձողներն ալ հաշվելով,
հազիվ երկու տասնյակի հասներ մեր թիվը:
Մյուսները ամբողջովին հովիտն էին, ու ան-
կե ոչ ոք վեր կելլեր այլևս: Վերը մնացող-
ներն ալ ավելի տեղեկություն մը չունեին
ժանտարմային բերած հրամանին նկատ-
մամբ:

Այստեղ տեսանք նաև Կոմիտասը, և մեզի զարմանալի թվեցավ որ տակալին վերը կմնա, մինչդեռ իր ճամփու ընկերները և ընդհանրապես բոլոր անոնք որոնցմեն սովորաբար շրջապատված կմնար, հովիտն էին արդեն:

«Մեկը ըսավ թե Կոմիտաս ալ իշնելու վրա էր, ոուշնիսկ քայլերը երագեց երբ էնկյուրիեն եկող ժանտարման հրապարակ հասավ, բայց տեսնելով որ այս վերջինը վերստին ձի հեծնելով դեպի հովիտ կշտապե, իսկույն ետ դարձավ ու մնաց»:

Վերջին պիտի պարզվեր թե էնկյուրիեն եկող ժանտարման հրաման մը բերած էր հնակյան Հակոբ Ավետիսյանի (Արծրունի) մասին՝ որ Զանդըրը տարվող խումբին մեջ էր:

Արդարեւ, կարավանին Գալեճիք գտնված տեսն, աքսորականներն կզատեն, Այաշ զրկվելու համար, Արծրունին: Հետո բոլորը կբերվին հովիտ, ուրիշ ճամփա պիտի հանվեին դեպի Զանդըրը, աքսորականներու վերշին կայանը:

«Երբ հովիտեն կիշնեինք, —կպատմե Արամ Անտոնյան, —Կոմիտաս պահ մը մեր մոտ մնաց: Բոլորովին հուզված ու անհանդարտ երևույթ մը ուներ, ու թերերը շարժելով բաներ մը կմրթմրթար զորս չէինք ըմբռներ որոշակի: Հետաքրքրված էր թե սժանտարման ինչու տարավ Արծրունին», և պետք եղավ իրեն բացատրություն տալ եղածին վրա: Զեմ կարծեր սակայն որ մտիկ ըրավ: Շրթունքները կերերտկային, բայց ոչ մեկ բառ կխոսեր անոնցմե: Կզգայինք իր ներքին փոթորիկը որ կտառապեցներ զինքը, բայց մեզի կարելի չէր անոր թափանցել:

Հետո անցանք գինքը, և միշոց մը շտեսանք թե ի՞նչ կըներ, մինչև որ հանկարծ իր ձայնը առինք նորեն, բայց այս անգամ հըստակ ու որոշ.

— Բացվեցեք, ճամփա տվեք, կըսեր:

Մեր մտածումը այն եղավ թե ժանտարմա մը կու գա ետևնուս: Դարձանք և նայեցանք դեպի խանը, բայց ոչ ոք տեսանք ճամփուն վրա: Իրավ է, բան մը կհետևեր մեզի, բայց մարդ չէր, այլ քոստու ու հիվանդիկախ էշ մը որ իր խրիստ սրունքներուն վրա տատանելով կիշներ հովիտ, ուր խոտը չէր պակսեր:

Կոմիտաս կանգ առած էր, վերարկուին ծալքերը փորին շուրջը սեղմած, և երբ անսառունը իր առջևեն կանցներ, մարմինը կորոցուց հարգանքի դիրքով մը, ու ձեռքի շարժումով մը երկար ողջույն մը ուղղեց անոր: Հետո, մինչդեռ անասունը մեզի կմոտենար, Կոմիտաս հանձնարարեց մեր խումբին որ շաճապարենք, «թողոմք որ ժանտարման անցնի երթա»: Պարզապես իշուն կակնար-կեր:

Տեսարանը զավեշտական բնույթ մը ուներ անշուշտ իր տագնապին անտեղյակ և զողոներու համար, և ոմանք խնդացին, կարծելով թե կկատակե, բայց մենք տիտր մնացինք: Ասիկա վերջին արտահայտությունը եղավ ժանտարմայի իր մտավախության, և անկե անդին, մինչդեռ Զանդըրը ճամփուն վրա էինք, իր զղագրգոռությունը բոլորովին տարբեր բնույթ պիտի ստանար»:

«Ասուվան ժամը ութին էր ապրիլ 15/28-ի այդ հինգշաբթի օրը, երբ Գալեճիքն մեկնեցանք մուայլ, գրեթե ճնշող օդով մը: Տասներկու ժամվան ճամփա մը ունեինք մեր առջև մինչև Զանդըրը, —տասներկու ժամվան շարչարանք, կիորդինք, —բայց բաղդատմամբ նախորդ օրվան, այս վերջին հանգրվանը շատ պիտի չնեղեր մեզ:

...Խճուղին, դեպի Զանդըրը, բարեբախտաբար լավագույն վիճակի մեջ էր, բայց երկար ատեն մնաց անհարթ ու անհավասար, ու շարունակ պետք կծագեր ավելի նվազ ցից բարձունքներ վեր նվազու ծնթասպաները կշանային կարելի եղածին շափ շուտ հասնել Զանդըրը: Կառավանները անոնց ցանկութենեն օգտվեցան, և ճամփուն ընթացքին հաճախ մեղ վար իշեցուցին բարձունքներու ստորոտը, թե՛ գնացքը երագելու և թե՛ մանավանդ իրենց ձիերուն տաժանքը մեղմելու համար:

Սյդպես հետիւտն, բնական է ավելի գոշ էինք, որովհետև ոչ միայն կփրկվենք կառքերու ցնցումներն, —ինչ որ մեծապույնն էր մեր հոգերուն, —այլ առիթ կունենայինք համախումբ մնալու, իրարմե լուր առնելու, նույնիսկ շաղակրատելու, երբեմն բոլորովին ապշեցուցիչ թեթեւությամբ մը, իր թե այդ ճամփորդության ծայրը աքսորը ըլլար:

Հետզհետե լուր առինք նախորդ օրվան հիվանդներուն վրա: Բացի ծերունի Վրթանես Փափազյանն, որ շատ տկար կմնար, մյուսները բաղդատաբար լավ դրության մեջ էին:

Բայց Կոմիտասի վիճակը շատ ծանրացած էր: Կըսեին թե այլևս ժանտարմաներով չի հետաքրքրվեր բնավ, և իր մտավախությունը անոնց մասին բոլորովին անհետացած է, սակայն շարունակ կխոսի Պոլիս թողած թուղթերուն վրա, պոռալով թե ի՞նչ պիտի ըլլան իր աշխատառությունները: Զինքը հանդարտեցնելու համար ըսեր էին թե անգամ մը որ Զանդըրը հասնենք, դյուրին է իր թուղթերը և գիրքերը բերել տալ, և ավելի հանգստությամբ կրնա իր աշխատառություններուն վերադառնալ, բայց չէին կրցեր համոզել:

Ասիկա նոր երևույթն էր իր զղագրգոռության, որ նույն օրը մշտապես պիտի արտահայտեր ճամփու ընթացքին, մանավանդ կեսօրի վերց և Զանդըրը մոտեցած ատեննիս:

Այս վերջին երեսութին մեջ, իր ջղագրգոռությունը կերևա բոլորովին սուր և վրդովիշ հանգամանք մը ուներ որ նույնիսկ շատեր որոնք իրմով չէին հետաքրքրված մինչև այդադայ, հիմա հաճախ կիսունին իր վրա, և իր «Հիմանդրության» ալ վրա, և վախ կհայտնին որ հետևանքը կրնա ծանրագույն բան մը ըլլալ:

Ոմանք ալ կղարմանային թե ինչպես Կոմիտաս այսպես հանկարծ փոխվեցավ: Իրոք բանտին մեջ, ինչպես ճամփու ընթացքին, մինչև Բավլի, Կոմիտաս երբեք արտակարդ մտահոգություն մը ցուց չէր տված: Երբ գեռ բանտն էինք, կատակ մը կնկատեր եղածը, և այն համոզումը ուներ թե շուտով սիսալը կղարմանվի: Այնքան հեռու էր սև մտածումները որ առհասարակ շուրջինները կմիիթարեր և կբաշալերեր, ամեն մարդու սիրտ կու տար, կջանար վանել անոնց մոտ արմատ ձգած անհուսությունն ու մտավախությունները: Ասիկա պարզապես կհայտներ թե ներքնապես անդորր կմնա: Եվ այս ներքին անդորրությունն է որ սովորաբար արփոյան կանվաննենք: Կոմիտաս, մեր մեջ, իրապես մեկն էր ամենն արիներեն»:

Արամ Անտոնյան քանի մը տող քաղելե հետո թյուզանդ թեշյանի և դոկտ. Թորգոն լաւնի հուշերեն Կոմիտասի արի կեցվածքին մասին աքսորի օրերուն, կշարունակել.

«Անոնք որ զինքը այդպես տեսեր էին, չէին կրնար ըմբռնել թե աննշան միշագեպը, — ժանարմայի մը կողմե դործված պարու ու անհետանեն կոպտություն մը որ իրեն դեմ ալ չէր ուղղված, — կրցավ մեկ վայրկյաննեն մյուսը իր մեջ քանդել այդ հոգեկան անդորրությունը: Ասիկա պարզապես հանենուկ մը կթվեր իրենց:

Խնդիրը հոն է սակայն որ այդ ներքին անդորրությունը անեղծ մնացած էր իր մեջ, երբ Բավլի միշագեպը պատահեցավ: Չեմ կարծե՞ք:

Կոմիտաս բանտին մեջ, ինչպես ճամփուն վրա, շրջապատված մնաց այն մարդոցնեն որոնք առաջին վայրկյանն իսկ մտահոգությունը ունեցան թե մեր ձերբակալությունը պարզապես մաժվան դատապարտություն մըն է, և թե ուշ կամ կանուխ բոլորս ալ պիտի զոհվինք ունե՞տեղ, ունե՞ պատրվակով ու ո՞ւնե՞ եղանակով: Անշուշտ այսպես խորհուներուն ամենքն ալ չնահատակվեցան, ոմանք նույնիսկ առաջին պատողներ եղան, բայց վերջապես մինչև իրենց փրկությունը, ամեն օր, ամեն ժամ, գրեթե որիշ բանի վրա շխոսեցան, այլ միայն մեղմ վիճակված արկածին այդ սարսափելի ելքին վրա: Ասոնց մեջ պատմության հմուտ անձեր կային, — կհիշեմ լոկ Քելեկյանն ու Քեշյանը, որոնք իրենց հոգետեսության, կամ իրենց բառով՝ հեռատե-

սության ուժ տալու համար օրինակներ կրերին ֆրանսական մեծ հեղափոխության արհավիրքի շրջաննեն, թվելով շարան-շարան գումաները բոլոր ականավոր մարդոց զորս կիյերինը հնձած էր, և նմանության եղբեր կատանեին, ավելի ճիշտը՝ կստեղծեին անոնց և իրենց միջև:

Կոմիտաս կևեր այս ամենը, և շատ հավանականաբար, գրեթե ամեն օր և ամեն առթիվ կրկնվող այդ զարհութելի պատմությունները, մինչև մեր Բավլի հանիլը արդեն քանդեր էին իր հոգեկան անդորրությունը, ա'յնքան որ պատիկ պատճառ մը կրնար տեղի տալ ոչ միայն պարզ ու ժամանակավոր զգագրության մը, այլ նույնիսկ ավելի ծանր մտքի խանգարման մը: Զմոռնանք որ իր փիզիկական «տեսակ մը» դրությունն ալ, զոր երբեք պետք չէ աշքը հեռացնել, զինքը շատ արամագիր կղարձներ այդ կարգի տագնապի մքը:

Իրերը այնպես բերին որ ժամանարմային միշագեպը ըլլա այդ պատճառը: Բայց այդ միշագեպը իր մեջ բան մը շնախտեց, այլ պարզապես իր մեջ արդեն իսկ խախտած բանի մը հայտնության տեղի տվալ: Եթե այդ միշագեպը պատահած ալ չըլլար, որիշ ո՞ւնէ բան, մեզմե մեկուն կողմե եղած անհարկի ակնարկություն մը, կատակ մը, կրնար պատճառ դառնալ միևնույն ջղալին տագնապի պին:

Ասոր ապացուցը սա է որ ժամանարմաները, որոնք այնքան մտավախություն կտառապեին իրեն, վերջնականապես մոռցավ, բայց իր զղագրգությունը մնաց, որիշ երեւուցիթ մը ստանալով:

Եվ ավելի հատկանշական ապացուցը մըն է սա պարագան, — ինչպես Զանզըրը հասնելս ետքը տեղեկացանք, — որ իր զղագրգության այդ նոր երեսութիւն հայտնության պատճառ դարձած էր իր ճամփու ընկերուց, Պալաբյան վարդապետի կողմե եղած պարզ ու անմեղ հարցում մը թե արդյոք ձերբակալվելեն առաջ ունէ կարգադրությունը ըրած էր իր ձեռագիրներուն փրկության համար»:

Կոմիտաս երբեք վար չիշավ ճամփու ընթացքին, ինչպես չիշան նաև եալլեներու մեջ թառած իր բախտակիցները»:

Դժբախտաբար Արամ Անտոնյան շավարտեց աքսորի իր հուշերը: Ընդհաւատեց զանոնք մեկեն՝ հավանաբար Արևմուտքի վարչության հետ անհասկացողության մը պատճառավ: Այնպես որ լորիվ մեղ ծանոթ չեղան Կոմիտասի և իր ընկերներուն անցուցած օրերը Զանզըրի մեջ, այն ժանրամասնություններով զորս ի վիճակի էր տալ միայն ինքը Անտոնյան: Ան կարավանը կրերե կհասցնե մինչե թյունելի մոտ, շարաշուր այն վայրը ուր ինք, ճիշտ ու ճիշտ 81 օր վերջը, այն է օդոսուու

6-ին՝ կառքի դժբախտ արկած մը պիտի ունենար երբ 26 ընկերներու հետ Զանզըրը ևն էնկյուրի կտարվեր, —դժբախտություն որ հիվանդանոց պիտի պահեր գինք ատեն մը և պիտի փրկեր զայն այն սպանդեն որուն իր ընկերները զոհ պիտի երթային էնկյուրի ինքնելք թիլ հետո: Անոր այդ արկածեն շարաթ մը ետք, օգոստոս 13-ին, միշտ «Թյունեյի այդ տիրահամբավ խանին առջև էր որ ոշխարներու պես պիտի մորթվեին Վարուժանը ու Սևակը, իրենց նույնքան դժբախտ երեք ընկերներում, Օրթազյուղի Հացագործ Արթին աղայի, կազմարար Օննիկ Մաղաղաճյանի և երկաթագործ ուրֆացի Վահան Քեհցյայանի հետ, հինգն ալ թիկերնեն կապված և բոլորվին մերկացված, որպեսզի իրենց հագուստներն ու ներքնազգեստները չկտրատվին, շարյութոտին, չաղտոտին, արժեքե շիշնան»:

Արամ Անտոնյան Կոմիտասը կթողու կարավանը Թյունեյ մեկնելի առաջ, հիշելով միայն որ ան Գալեճիքեն բաժնվելի հետո կառքեն երբեք վար չիշավ ճամփու ընթացքին:

Եկ թող ընթերցողը մեզ թուզ տա որ դիմենք աքսորի իր մյուս ընկերներու հուշերուն ալ, ճանշնալու համար այն քանի մը շարաթը զոր Կոմիտաս անցուց աքսորի մեջ: Եթե շատ բան չգիտցանք դժնդակ շարաթներուն մասին զորս Այաշի աքսորականներն ապրեցան իրենց եղերական վախճանեն առաջ, Զանզըրը տարվածներուն մասին ավելի լուրեր ունեցանք, վերապրողներու հուշերուն շնորհիվ: Իրենց հուշերը գրեցին, օրինակ, Դրիգորիս վրդ. Պալաքյան (հետո եպիսկոպոս), Միքայել Շամտանցյան, Բյուզանդ Քեշյան, Սարգիս Սրբնց, դոկտ. Նագաշյան, Հայկ Խոճանարյան, ավելի կամ նվազ մանրամասնությամբ: Անոնք իրենց հուշերուն մեջ խոսեցան Կոմիտասի մասին ալ, հնարավոր դարձնելով որ զայն ճանշնանք նաև այն օրերուն՝ երբ հոգիով ու ջիղերով ամուր այն մարդը որ Կոմիտասն էր, հետզհետեցնցի ներսեն, ու հոգեկան վերք մը իր ներսը բանի, զայն հասցնելու համար վերջնական փլուզումի մը:

Պալաքյան վարդապետ կպատմե թե աքսորականները ինչպես ժամանեցին էնկյուրի, և թե ինչպես ճամփու հանվեցան հոնկե դեպի աքսորավայրը, կնկարագրե իրենց սարսուոր երբ կառքերու շարանը, էնկյուրին իրենց ետին ձգելով, մտավ սարերու և ձորերու դաշտապուլտ անհարթ ճամփաներու մեջ.

«Թանի մեր ճամփան կշարունակեինք և

մարդաբնակությունները կհեռանալինք, այնքան մեր հոգիները կիսուովեին և մեր մտքերը շարագուշակ մտածումներով ինքնալիումի կենթարկեինք: Զի ամեն ապառաժի և ամեն ծառի ետև պահապտած ավազակներ տեսնել կկարծեինք, և ամեն ծառի վար ճգված կախորաներ կախաղանի շվան կկարծեինք... Հայ ժողովրդի շինական երգերու վարպետու հայր Կոմիտաս, որ մեր կառքին մեջ կտսնվեր, արգեն մաքի տարօրինակ տրամադրություններ կրցուցներ, և հաստարմատ ծառերը շարժուն և հարձակող ավազակներ կարծելով, միշտ իր զուկը վերարկուի փեշերուն ներքե կշանար թագունել, որսորդի երկուղեն ավազի տակ զուկը թաղող կաքանիներու նման: Կիախանձեր որ «Պահպանիչ» բամբ իր զիտուն վրա, հուսալով վերագտնել իր հոռովաճույզ հոգիին հանդարտությունը»⁴:

Կոմիտասի մասին աքսորի իր հուշերը պատմեց նաև Հայկ Խոճանարյան: Նախկին տնօրին Մայր վարժարանի, և հետո Քերայի կայան վարժարանի՝ Խոճանար ազգային երեսփոխան ալ էր, մեկն էր կեղրոնի խմբակցության ամենին կարկառուն անդամներն, և մաս էր կազմած Հարստահարությանց հանձնաժողովին: Եվ սակայն միշնորոգությանց շնորհիվ կրցավ աքսորեն դառնալ, և հայ կյանքի մեջ գեր կատարեց հետագային ալ Պոլիս թե Ամերիկա: Խոճանարյան կգրե իր հուշերուն մեջ.

«Ապրի 24-ին Պոլիսն աքսորված հայ մտավորականներու շարքին մեջ էր նաև Կոմիտաս վարդապետ: Երեք հարյուրի մոտ ձերբակալյալներու մեջ ամենին ընկճվածը ինքն էր. իր արկեստագետի նովր և զգայուն հոգին չէր կրցած տոկալ այսքան ծանր ցընցումի մը, և զիտակ՝ թե ճակատագիրը վաղվան համար ինչ վերապահած է իրեն, մահվան արհավիրքի մեջ կապրեր: Որոշ էր որ կյանքի պահպանման բնազդը այլևս լուեցուցած էր իր մեջ ամեն խորհուրդ և նախասիրություն: Բանտին մեջ հետ զեպի Զանկըրի աքսորի տաժանագին ուղևորության բովանդակ տեղությանը, զուկը երկու ձեռքերուն մեջ առած, ինքնամփու և անխոս, արձանային լուսություն կպահեր, անհաղորդ իր շուրջը անցած-դարձածին: Ի՞նչ դառն հակազդեցություն. ընկերային շրջանակի մեջ և ճանշածք էր զինքը. միշտ զվարթ և ժպառուն»⁵:

⁴ Հայ Գողգոթան, էջ 92—93:

⁵ «Կոմիտաս վարդապետ. անձնական հուշերէս», «Հայաստանի կողնակ», 1936, թիվ 1, էջ 11: